# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին**

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում ստորև ներկայացնում է իր կարիքների համար կրթական օբյեկտների շենքային պայմանների բարելավման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/2 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2020 թվականի փետրվարի 27-ին կնքված N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/2-1 պայմանագրում 2020 թվականի հունիսի 3-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

| | |
|---|---|
| 1) Փոփոխության առաջացման պատճառ | ՀՀ կառավարության 07.05.2020թ-ի N 709-Ն որոշում: |
| Փոփոխության նկարագրություն | N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/2-1 պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցի տրամադրում: |
| Փոփոխության հիմնավորում | Պայմանագրի 7.5 և 7.13 կետեր: |
| 2) Փոփոխության առաջացման պատճառ | Պատվիրատուի բանկային վավերապայմանների փոփոխության անհրաժեշտություն: |
| Փոփոխության նկարագրություն | Պայմանագրում և Պայմանագրի բոլոր հավելվածներում փոխվել են Պատվիրատուի բանկային վավերապայմանները: |
| Փոփոխության հիմնավորում | Պայմանագրի 7.5 կետ: |

Պատվիրատու՝ *ՀՀ քաղաքաշինության կոմիտե*

# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

## 27.02.2020թ. կնքված N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/2-1 գնման պայմանագրի

ք. Երևան 03.06.2020թ.

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<ԱՐՄՍՏՐՈՅ>> ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կատարող)՝ ի դեմս ընկերության տնօրեն Ա. Առաքելյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից՝ երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով ՀՀ կառավարության 07.05.2020թ. N 709-Ն որոշումը և կրթական օբյեկտների շենքային պայմանների բարելավման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների կատարման համար Կողմերի միջև 27.02.2020թ. կնքված N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/2-1 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 և 7.13 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

### 1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին՝

ա) Պայմանագիրը լրացնել նոր հավելված N2-ով՝ համաձայն Համաձայնագրի հավելվածի:

բ) Պայմանագրում և Պայմանագրի բոլոր հավելվածներում Պատվիրատուի բանկային վավերապայմաններում <<900011011724>> թվերը փոխարինել <<900011034643, 900011034650, 900011034668, 900011034684, 900011034767, 900011034585, 900011034593, 900011034601, 900011034619, 900011034627, 900011034635, 900011034775, 900011034676>> թվերով:

### 2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում Կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

Համաձայնագրի հավելվածը՝ բաղկացած 3 (երեք) էջից համարվում է Համաձայնագրի անբաժանելի մասը:

### 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝ | ԿԱՏԱՐՈՂ՝ |
|---|---|
| ՀՀ քաղաքաշինության կոմիտե | <<ԱՐՄՍՏՐՈՅ>> ՍՊԸ |
| ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 | ք. Երևան, Թումանյան 32/4 |
| ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն | <<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ |
| Հ/Հ 900011034643, 900011034650, 900011034668, 900011034684, 900011034767, 900011034585, 900011034593, 900011034601, 900011034619, 900011034627, 900011034635, 900011034775, 900011034676 | Հ/Հ 1150002922490100 |
| ՀՎՀՀ 02565827 | ՀՎՀՀ 09809552 |
| Գլխավոր քարտուղար՝ | Տնօրեն՝ |
| _______________ Ա. Մկրտչյան (ստորագրություն) Կ.Տ. | _______________ Ա. Առաքելյան (ստորագրություն) Կ.Տ. |

Հավելված
27.02.2020թ. կնքված N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/2-1 պայմանագրի
03 .06 .2020թ. կնքված N1 համաձայնագրի

<<Հավելված N 2
27.02.2020թ. կնքված
N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/2-1 պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

## Կրթական օբյեկտների շենքային պայմանների բարելավման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների, այդ թվում՝

ՀՀ դրամ

| Աշխատանքի | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | Հաշվեհամարը | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ.՝ ըստ ամիսների, այդ թվում՝ | | | | | | | | | | | | |
| | | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 71241200/516 | 900011034643 | <<Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձորի Ղևոնդ Ալիշանի անվան N 27 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի | - | - | - | - | - | - | - | - | - | 6 100 000 | 6 100 000 | 6 100 000 | 6 100 000 |
| 2 | 71241200/517 | 900011034650 | <<Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վարդաբլուրի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի | - | - | - | - | - | - | - | - | - | 6 100 000 | 6 100 000 | 6 100 000 | 6 100 000 |
| 3 | 71241200/518 | 900011034668 | <<Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդու թիվ 12 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի | - | - | - | - | - | - | - | - | - | 6 100 000 | 6 100 000 | 6 100 000 | 6 100 000 |

| | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 5 | 71241200/520 | 900011034684 | ՀՀ Գեղարքունիքի մարզի <<Գետաշենի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի | - | - | - | - | - | - | - | - | - | 6 100 000 | 6 100 000 | 6 100 000 | 6 100 000 |
| 7 | 71241200/522 | 900011034767 | ՀՀ Արագածոտնի մարզի <<Արագածի Մ. Մեխակյանի անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի | - | - | - | - | - | - | - | - | - | 6 100 000 | 6 100 000 | 6 100 000 | 6 100 000 |
| 13 | 71241200/528 | 900011034585 | <<Երևանի Վ. Թեքեյանի անվան թիվ 92 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի | - | - | - | - | - | - | - | - | - | 6 100 000 | 6 100 000 | 6 100 000 | 6 100 000 |
| 14 | 71241200/529 | 900011034593 | <<Երևանի Ա. Երզնկյանի անվան հ. 118 ավագ դպրոց>> ՊՈԱԿ-ի | - | - | - | - | - | - | - | - | - | 6 100 000 | 6 100 000 | 6 100 000 | 6 100 000 |
| 15 | 71241200/530 | 900011034601 | <<Երևանի Մ. Սարյանի անվան հ. 86 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի | - | - | - | - | - | - | - | - | - | 6 100 000 | 6 100 000 | 6 100 000 | 6 100 000 |
| 16 | 71241200/531 | 900011034619 | <<Երևանի հ. 37 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի | - | - | - | - | - | - | - | - | - | 6 100 000 | 6 100 000 | 6 100 000 | 6 100 000 |
| 17 | 71241200/532 | 900011034627 | <<Երևանի հ. 136 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի | - | - | - | - | - | - | - | - | - | 6 100 000 | 6 100 000 | 6 100 000 | 6 100 000 |
| 18 | 71241200/533 | 900011034635 | Երևանի <<Սիլվա Կապուտիկյանի անվան հ. 145 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի | - | - | - | - | - | - | - | - | - | 6 100 000 | 6 100 000 | 6 100 000 | 6 100 000 |

| | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 19 | 71241200/534 | 900011034775 | <<ՀՀ Վայոց Ձորի մարզի Շատինի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի | - | - | - | - | - | - | - | - | - | 6 100 000 | 6 100 000 | 6 100 000 | 6 100 000 |
| 20 | 71241200/535 | 900011034676 | <<Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ակունք գյուղի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի | - | - | - | - | - | - | - | - | - | 6 100 000 | 6 100 000 | 6 100 000 | 6 100 000 |
| ԱՄԲՈՂՋԸ՝ | | | | - | - | - | - | - | - | - | - | - | **79 300 000** | **79 300 000** | **79 300 000** | **79 300 000** |

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով՝ յուրաքանչյուր փարվա համար: >>*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝**
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ,
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011034643, 900011034650,
900011034668, 900011034684, 900011034767,
900011034585, 900011034593, 900011034601,
900011034619, 900011034627, 900011034635,
900011034775, 900011034676
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար

______________ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ՝**
<<ԱՐՄՍՏՐՈՅ>> ՍՊԸ
ք. Երևան, Թումանյան 32/4
<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 1150002922490100
ՀՎՀՀ 09809552

Տնօրեն՝

______________ Ա. Առաքելյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ABB

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
ЗАО «АРМБИЗНЕСБАНК»
“ARMBUSINESSBANK” CJSC

N 3056-02

«27» 05 2020

# ԵՐԱՇԽԻՔ
## (որակավորման ապահովում)

1.Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է **ՀՀ քաղաքաշինության կոմիտեի** (այսուհետ՝ բենեֆիցիար) կողմից **ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/2-1** ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի արդյունքում **«ԱՐՄՍՏՐՈՅ»՝ ՍՊԸ** (այսուհետ՝ պրիցիպալ) կողմից կնքված N **ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/2-1** պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովում (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ):

2. Երաշխիքով «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել **79,300,000 /յոթանասունինը միլիոն երեք հարյուր հազար/ ՀՀ դրամ** (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց տասը աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի 900008000664 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է բենեֆիցիարի և պրիցիպալի միջև N **ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/2-1** ծածկագրով կնքված պայմանագրին ուժի մեջ մտնելու օրվանից մինչև բենեֆիցիարի կողմից պայմանագրի կատարման արդյունքը ամբողջական ընդունվելու օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ, կամ առավելագույնը՝ մինչև **20.12.2020թ.**:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N **ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/2-1** ծածկագրով կնքված պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը.

3) սույն երաշխիքը.

4) երաշխավորված պարտավորությունների խախտման հիմնավորումը:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալու հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

**Վարչության նախագահի տեղակալ՝** **Ն. Գրիգորյան**

**Գլխավոր հաշվապահ** **Ն. Սարգսյան**

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
ЗАО «АРМБИЗНЕСБАНК»
"ARMBUSINESSBANK" CJSC

N 3057-02
«27» 05 2020

# ԵՐԱՇԽԻՔ
## (պայմանագրի ապահովում)

1.Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ բենեֆիցիար) և **«ԱՐՄՍՏՐՈՅ» ՍՊԸ** (այսուհետ՝ պրիցիպալ) միջև կնքված N **ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/2-1** պայմանագրից բխող պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահով:

2. Երաշխիքով «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել **7,930,000 /յոթ միլիոն ինը հարյուր երեսուն հազար/ ՀՀ դրամ** (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց տասը աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի 900008000664 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է բենեֆիցիարի և պրիցիպալի միջև կնքված N **ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/2-1** պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև պրիցիպալի կողմից ստանձնված պարտավորությունների ամբողջական կատարման վերջին օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ, կամ առավելագույնը՝ մինչև **20.12.2020թ.**:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N **ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/2-1** պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցով գործող տեղեկագրում հրապարակված ծանուցումը.

3) սույն երաշխիքը.

4) երաշխավորված պարտավորությունների խախտման հիմնավորումը:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալու հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

**Վարչության նախագահի տեղակալ՝** **Ն. Գրիգորյան**

**Գլխավոր հաշվապահ՝** **Ն. Սարգսյան**